


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ն. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ սրտ է
գրութիւն պէտք է ուղղել աս
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի
ԳԱՆԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՉԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամին	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԻ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
Եւ թղթատարի ծախքը
Խոնաքորոքեանս վրայ է :

Խոնաքորոքեանս ուղղուած
գրութիւնք ևս չ'են սուրբ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են


H. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHEOLOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՏԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԶԱՏԿԱԿԱՆ ՕՐԵՐԸ



Արդէն ծանուցած էինք թէ՛ ձեզ գա-
լայի ՇԱՐԱԹ, և Զատիի ԶՈՐԵՔՏԱՐԹԻ օ-
րերը ԱՐՇԱՆՈՅՍ չ'պիտի հրատարակուի :

Մեր գէպի Աղէքսանդրիա քրած ճամ-
բորդութիւնը՝ այլևայլ բանաւոր պատճառ-
ներով երկարելով, պատճառներ՝ որոնք
թերթիս յառաջդիմութեան հետ սերտ կեր-
պով կապուած էին, ԱՐՇԱՆՈՅՍ չ'հրատա-
րակուեցաւ նաև անցեալ 20 ապրիլի ՇԱ-
ՐԱԹ օրն :

ԱՐՇԱՆՈՅՍ ի հրատարակման այս պա-
տահանին ընդհատուածը նուիրագործելու նը-
պատակաւ, յետ այսու ամեն տարւոյ հա-
մար ԱՐՇԱՆՈՅՍ արձակուրդ մը կը հաստա-
տէ Զատիկան Տօներու աւթիւ, հրատա-
րակուած նշանակելով սոյն երեք թիւերն :
Եւ ինչո՞ւ չէ :

Միթէ Գահիրէի կլիման չէ՞ ներած ե-
ռամնայ և աւելի արձակուրդներ հաստա-
տել գատարաններու, կառավարական, ալ-
գային և մասնաւոր վարժարանաց, ամեն
գասակարգի հաստատութեանց պաշտօնեա-
ներուն և նոյն իսկ անոնց օգնականներուն
համար :


Աւրեմն ինչո՞ւ ԱՐՇԱՆՈՅՍ ալ իր քանի
մը օրերու արձակուրդը չ'ունենայ . չէ՞ մի
որ նա ալ իր բոլոր պաշտօնեաներովը՝ ե-
գիպտական տոչորոզ կլիմային աղքեցու-
թեանց ենթակայ է :

Մեր այսօրուան համարը հետեւաբար՝
իր մէջ ունի նաև 169 և 170 թիւերը :


ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ

ԻՇԻԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



Ժուրնալ սր Պորտի Ապրիլ 11 ի թի-
ւին մէջ, Ն. Ա. Բ. Լուսինեան Իշխանի մա-
սին հետեւեալ բերկրաւիթ գրուածները կը
կարգանք :



« Ն. Ա. Բարձրութիւն Իշխան կի սը
ԼՈՒՍԻՆԵԱՆ, ընդունած է Պատուակալ Նա-
խագահի բարձր տիտղոսը՝ Թուրքի Մօն-
րէալ Ակադեմիային, որուն ս'նչափ տու-
ղանդով կը նախագահէ Գիրիթի Մերակա-
տական և Arcades de Rome ի ակադեմիա-
կան Գոմանտօն Ալպէր Մէլ :

« Այս նոր և արժանաւոր ընտրութիւ-


նը, վարձատրութիւն մ'է՛ Ա. հասար մեծ
մրանածհայ Բառարանին հեղինակութեան :

« Մեր հայասէր ընթերցողները հարկաւ
գիտեն որ այս ճշմարիտ հմտալից գրական
յիշատակարանը, յղացուած և գործադր-
ուած է՝ նոյն ինքն Օգոստափառ Իշխանին
կողմէ :

« Մեր բոլոր Հար-Արեւմտեան ֆրանսա-
ցի հայասէր կուսակցութեան բարեկամնե-
րը, պիտի ծափահարեն Մօն-Րէալի Ակա-
դեմիային այս որոշման վրայ, որ յետ այ-
սու այդ հուշակաւոր ընկերութիւնը, իր 15
դարեան անմահ և անբիծ փառքովը՝ պիտի
հովանաւորուի Բարձր. Իշխան Լուսինեանի
անունով :

« Թող Իշխանը բարեհաճի ընդունիլ
մեր ամենայնադալից շնորհաւորութեանց
հետ, մեր անփոփոխելի անձնութեան
հաւատարմնն : »

ՇԱՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ



Ապահովաբար, Մուղաֆէրէտին Շա-
հը իմաստուն վեհապետ մըն է : Կը թուի
որ հաստատապէս որչա՞ծ է բարեկրօնում-
ներու նոր թուական բանալ իր երկրին
համար :

Ճամբորդութիւնը զոր կատարեց Եւրո-
պա և համակրութիւնը զոր կը տածէ հա-
յերուն նկատմամբ՝ բաւարարօքն ցոյց կու-
տան թէ աւելի լայն մտքով մը օժտուած
է քան Հովիտը և աւելի ազնիւ սիրտ մը
կը կրէ քան Վիլհելմը : Կէթ այս է տպա-
ւորութիւնը զոր կը թողու մեր վրայ այն
նշանակալից հրատարակը զոր Եւրոպայէն
դարձին հրատարակեց և որով արտօնու-
թիւն կը շնորհէ իր կայսրութեան հայ հը-
պատակներուն կրթարաններ հիմնելու, ժո-
ղովներ գումարելու, և առևտրական ըն-
կերակցութիւններ ստեղծելու :

Ի՞նչ բնազգականօքն պարտէր գնահա-
տել այն վարիչ գաղափարները որոնք ա-
ւարտուղ գարուս ընթացքին մէջ յղացուե-
ցան ու կատարուեցան Արեւմուտքի մէջ այն
ազգերուն կողմէն որոնց հետ ինքն իսկ
կը պատկանի Հնտերոպական մեծ ցեղին,
նկատում մըն է որ կրնայ հագեւանականօ-
րէն քիչ նպաստած չ'ըլլալ իր որոշումը
փութացնելու : Բայց իրաջութիւնը թէ իր
ժողովրդին քրիստոնեայ մասն է որ ընտ-
րած է իր ազատական ծրագիրներուն վար-
ձարկութեան իրը առաջին հօղը, ատով
նուազ պատուաբեր չէ իրեն, ինքը՝ արե-
ւելեան ու մահմեական վեհապետ մը :

Իրիճադելի պիտի ըլլար - և յետոյ կա-
րելի բան չէ - փորձել նոյն իսկ Ա. Լուսու-

րաբար որոշելու այն բոլոր ներկայ կամ
հեռաւոր դիտումները որոնք չեն գաղբիր
պաշարիլէ բացարձակ միապետի մը - կամ
ինչ որ նոյն է իր խորհրդականներուն - փո-
ռատեն իրեակայութիւնը : Բայց ներկայ
պարագային մէջ, չափազանց յանգւնու-
թիւն մը պիտի ըլլար ենթադրել սր Շէ-
հին-Շահը իր երկրին ապագան փրկելու
անմեղ խօստում մը տուած է ինքզինքին :

Ինչ որ կը միտի սակայն արդարացը-
նելու այս ենթադրութիւնը՝ այն դիւանա-
գիտական իրողութիւններն են որոնց թաա-
րըն եղաւ վերջերս Իրանի Պետութիւնը :

Բաժնելով Մոսկօֆեան կայսրութեան
սահմանները հարաւային շերին ծովերէն՝
Պարսկաստան աշխարհագրականօքն նախա-
սահմանուած էր առաջիններէն մէկն ըլլալ
յառաջխաղացումներուն Հիւսիսի հսկային
որ արեւոտ նաւահանգիստներու կը տենչայ-
և Պարսկային ծոցէն Էնտուսթան ճամբան
չաա երկար չէ . . . Այս երկիրը կոչուած
է Չարին ստացուած քներէն մէկն ըլլալու
և Լօրտ Բիւրդընի գաղափարութեան համեմատ՝
առաջին գաղտը պիտի ծառայէ ապագային՝
Բրիտանական ու Ռուսական կայսրութեանց
միջև զինեալ ընդհարումի մը :

Ինչ որ ալ ըլլայ այս ճակատագրական
ընդհարումին ելքը, ստաց է որ Պարսկաս-
տանի անկախութիւնը պիտի տուժէ : Ապա-
սելով դիւանագիտական պայքար մըն է որ
կը մղուի Ժամանակէ մը ի վեր Ս. Ճէյմսի
և Ս. Ռէթէրգլուրի գահիճներուն միջև
Հարաւային նահանգներուն մէջ անդ լիական
առուտուրը և ազգեցութիւնը կը շարունա-
կեն գերակշիռ ըլլալ, բայց հիւսիսային
մասերուն մէջ բաւարարին տեղի տուած են
առուսական ազգեցութեան, և վերջին փո-
խառութիւնը զոր Թէհրանի կառավարու-
թիւնը կնքեց ուրուսյալն իրախառնորթեան
դրամատներէն մաքային հասոյթներու ե-
րաշխաւորութեամբ, մեծ յաջողութիւն մըն
է զոր Ռուսիա ունեցաւ, ի վնաս տեղիւն,
Բօրթ-Արթիւրի գրաւումէն ի վեր :

Արդ վեհապետ մը, որ սկանաւետ է
այս ընդմիջմաւ շահերու սպառնալից զար-
գացման ի վնաս իր երկրին, և որ գիտա-
կից է անոր հանդէպ պայտասկանութեանց,
չ'կրնար առանց փոքր ինչ մեղմանալութեան
նախատեսել ապագան որ կ'սպասէ իր կայս-
րութեան : Այս պայտասկաններուն մէջ, Մու-
ղաֆէրէտին Շահը իր հեռատեսութեանը
ապացոյցը տուած եղաւ որդեգրելով այն
մէթոտները որոնց գերագնացութիւնը մօ-

տէն հաստատեց Արեւմտքի մէջ . և այս պահուստը սը սը մտքէն պիտի անցնէր տարակուսիլ անոր մտքին հաշտագրուած յատկութեանց վրայ սրով կ'երևի թէ օժտուած է , եթէ նոյն իսկ չափազանց պատրանքներ անուցանէր այն բարերար արդիւնքներու մասին զոր կը հաւատայ թէ այդ մեթոտները պիտի ունենան երկրին ապագային վրայ : Արեւն պարագայի մէջ , լաւագոյն է գէթ երկարացնել , որքան հնար է , վերահաս վտանգին պայմանաժամը , եթէ կարելի չէ բարձրովին ջնջել զայն :

Այս մտահոգութեանց հետեւանքներէն մին կարելի է նկատել Շահին ազատական տրամադրութիւնները : Այն խանդավառ ընդունելութիւնները զոր գոտու եւրոպայի մէջ ամեն տեղ հայերուն կողմէն իրենց բաժինը ունին անշուշտ մեզ նկատմամբ ցոյց տուած համակրական զգացումներուն մէջ : Բայց ստով նուազ ճշմարիտ չ'է թէ չ'էր կրնար իր հայ հպատակներէն աւելի յարմարագոյն գործիք մը ընտրել իր օգտակար ծրագիրներուն գործադրութեանը համար : Թուրքիա , Ռուսիա , ամեն տեղ , իր երկրին մէջ իսկ , հայ ցեղին մտաւորական ու արեւտեսական զարգացման տեսարանը բաւական էր համոզելու Իրանի միապետը թէ հայը և միայն հայը կրնայ անշահախնդրաբար և օգտակարօրէն իրեն աշակցել երկրին վերածնութեան գործին և անհունապէս դիւրացնել Պարսիկ ժողովրդին կէս-վայրենութեան վիճակին ուր կը գտնուի և արեւիշտեան քաղաքակրթութեան սրուն պարտի հասնիլ միջև եղած փոխանցական փոլին կանոնաւոր արագ կատարումը :

Կը մնայ մեզի օգտուիլ այս սրամագրութիւններէն : Այն մասնաւորապէս ճշգրտաժամային կացութեան մէջ ուր կը գրանուի այսօր հայութիւնը , միսթարական է հաստատել որ , հայրենի հողէն ոչ շատ հեռու կը գտնուի վայր մը որ հայը չ'կեղեքուի . ինչ կ'ըսեն նոյն իսկ արածուութիւններ կը շնորհուի անոր : Իրամատէրը , վաճառականը ինչպէս մտածումի մարդը կը գտնեն այսպէս իրենց առջև գործունեութեան ընդարձակ ու ազատ դաշտ մը : Փափաքելի է որ եւրոպացիներէն առաջ հայերը գերակշիռ դիրք մը դրաւէին այս գեղ չ'չափազործուած երկրին վաճառականութեան ու ճարտարարուեստին մէջ : Ոչ նուազ փափաքելի էր որ բազմապատկուէին ժողովրդին լուսաւորութեան միջոցները , ինչպէս վարժարան , մամուլ , Լսարան , ընթերցատուն ևն :

Այս ամենը սակայն հարկ է որ կատարուի առանց ո և է յեղափոխական յետմտածումի : Երբ Շահին հրովարտակը հրատարակուեցաւ եւրոպական թերթերու մէջ , եզան ցաւագար միտքեր օրոնք իրենք իրենց կը հարցնէին թէ արդեօք Շահը արածուութիւններ տալով հայերուն կրկնած չ'էր ըլլար այն սխալը զոր Սուլթանները իր թէ գործած էին իրենց հայ հպատակներուն վերաբերութեամբ , և կ'եզրակացնէին թէ Պարսկահայերուն կացութեան բարեօրումը իրեն անխուսափելի հետեւանք պիտի ունենայ Պարսկահայաստանը ազատելու նպատակով Յեղափոխութիւն մը :

Անոնք որ այսպէս կը մտածեն առանց հիւրին կը հաշուեն :
Որովհետեւ այդ տեսակ խլրատումներու

տոյն . Շահը չափազանց շուտօտ պիտի չ'զգայ զինքը , քանի որ պտտրտտ է . . .
Չարքը և Չարին երկուքէն ձեռքը չէ որ զինքը պիտի կոտորեն այն ստեն :

Աղէքսանդրիա Ս . ձ .

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆԱՍԻՆ

Առ Անաթոլ Յրանս
Les Bluettes հանդիսէն քառասնակ
բարգմանութիւն

Վարպետ , քու երկնատուր ձերքդ ներգաշնակութիւնը (1)
Այնքան ճոխօրէն յանգ կը կազմէ մեր Հայաստանին (2) հետ
Այս անուան քով քու անունդ այնքան լաւ կ'երգէ
— Հայրենիքիդ սիրուն անունը որ քուկը է եղած . —
Որ իրօք ամենէն գոյար բանն է աշխարհիս նորունկ համակրանքի այն փափուկ յօղը
Որ կը զուգէ թովիչ վանկերով այս երկու տնունները
Երկուքեակ քաղցրութեամբն իրենց երգեցիկ խաղերուն :

Հեզնութեան վարդապետ իմաստասիր գասերով ,
Դուն որ ժպտելու ձեւերը ուսուցիր մեզի ,
Ո՛վ Յրանս , բարձր մենութիւններու կատարէն
Ուր կախարհիչ միաբոյ իր բանդէտ խոհումները կ'արածէ ,
Ցասունի եւ գթութեան ինչ գիւցազնական յուզում ,
Ըսէ՛ , սիրոյ եւ եղբայրութեան ինչ շունչ
Հսկելի ստաւ . յանկարծ սկիւպիկ հոգեոյց եւ ճակատից
Դէպ ի արեւնոտ հորիզոնը մոլորոտ նախճիրներուն ,
Դէպ ի այս հոնդիւնը որ կուգայ մենողներու երկիրէ մը ,
Հսկայական հրկիւզի եւ եղենի հեռուներէ ,
Անհուն մարտիրոսութիւնէն ժողովրդի մը որուն հոգին
Ընդ երկար գալարուեցաւ արեւնի մէջ եւ բոցի :

Պիւճախօս կարեկցութեան այս ինքնաբուզի շարժումիդ համար ,
Բեղմնաւոր բարեկամութեան քու սլացքիդ համար դէպի մեզ ,
Եւ ան այնքան քաղցր խօսքերուն համար որով որ՛վ Յրանս ,
Մխիթարեցիր ստէպ մեր երկար տառապանքը ,
Ի նպաստ մեզ՝ բոլոր ըսածներուդ եւ ըրածներուդ համար ,
Հնորակալութիւնն :
Ամբողջ ժողովրդի մը միաձայն աղաղակն է աս ,
Եւ անաւասիկ իր երախտագիտութիւնը որ օրհներգի մը պէս կը բարձրանայ
Դէպ քու շքեղ ժեսքիդ եւ ասպետական կեցուածքիդ :
Աղէքսանդրիա ՄԻԿԱԵԼ ԼԱՅԿՈՒՆԻ

(1 2) Անաւասիկ այս տողերուն ֆրանսերէնը ,
Ta qualite divine , o Maitre : l'Harmonie Rime si richement avec notre Arménie

ԿՈՐԾԱՆՈՐՈՒՅԻ ԿՈՒՉՈՒԻ

Իերձակուհի Տիկին Է . Ա . Ասլանեանի Աղբջիկին համար գործաւորութիւններու պէտքը կայ . փափաքողը կրնան գիտնել իրեն բնակարանը ի Պապ-էլ-Լուք Հէլուանի կալարանին անկիւնը :

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

— 000 —

Անցեալ կիրակի երեկոյն Տիարը Շահրուբեան Եղբարը բնակարանին մէջ , ի Տարա Մուհամմէտ Ալի , տեղի ունեցած է նշանախօսութիւնը Աղէքսանդրիաբնակ Արարկերցի ազգայիններէն Տիար Կարապետ Կ . Մեարտաբանի ընդ Օրիորդ Հայկանուշ Թ . Խերպէկեանի :

Թէ՛ Շահրուբեան եղբարը , որոնք այժմը Գահիրէի ամենէն պատուաւոր վաճառականաց շարքին մէջ կը համրուին իրաւամբ , և թէ՛ Խերպէկեան և Մեարտաբան ընտանեաց ազգականք և բարեկամք՝ փութացած են իրենց պատուաբեր ներկայութեամբ շքաւորել սոյն հանգէն :

Բազմաթիւ ներկայից ի գլուխ՝ Արժանապատիւ Տէր Եղիշի Քահանայ Պալուսի կատարած է նշանօրհնէքի արարողութիւնը՝ մասնաւոր երգեցիկ գասու մը մասնակցութեամբ :

Մեր անկեղծ շնորհատրութիւնները :

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՍՆՈՒՆԴ

(Շարն . նախորդ թիւէն)

Բժշկական վիճակագրութեամբ մը ստուգուած է թէ՛ Բարիդի և շրջակայից մէջ , ուր մասկերութիւնը այնքան ընդհանրացած և չափազանց է , հիւանդանոցներուն մէջ յօղացաւ Rheumatisme . նոյնպէս կաթնուածի հիւանդութեամբ տառապողներուն թիւը քաղմապատկըրուած է : Հիւանդութիւններ , որոնք հետեւանք են չափազանց մասկերութեան :

Էտիմոլոգիկ բժշկական վարժարանին ուսուցիչներէն Տօքթ . Սըր ձէյն Քրիսթօն , 1892 ին գիտական համաժողովի մը մէջ ըսած է թէ անգղիոյ մէջ 40-50 տարեկան մարդոց թիւը զգալապէս նուազած է , իսկ ծերերուն շատ աւելի պակաս : Եւ ասոր պատճառ ցոյց տուած է զխաւորաբար չափազանց աղբջիկութիւնը և մասկերութիւնը (1) որոնք մարդու ջղային գրութիւնը կը խանդարեն և զինքը գրգռումն վիճակի մէջ կը ձգեն :

Արդարեւ ասանեւիներորդ դարու մարդիկը ո՛չ միայն հասակի , այլ նաև կեանքի ու խելքի կարճութեան ենթակայ են : Նախնիք շատ աւելի երկար կ'ապրէին , եւ հասակաւ երկայն , առոյց ու կայտառ էին : Պատճառը շատ պարզ է , վասնզի մեծաւ մասամբ բուսեղէնով կ'ապրէին և շատ քիչ միս կ'ուտէին :

Հոս անցողակի ըսենք թէ պահքը առողջապահական է և ո՛չ միասակար . մինչդեռ երբեմն բողոքական պատուելիներ հակառակը կը յայտարարեն , եւ պահքը մեր եկեղեցական հարց տգիտութեանը մի արդիւնք ցոյց կուտային . արդ ինչպէս կ'երևի պահոց սովորութիւնը շատ իմաստուն և առողջապահիկ է :

Անա զիտութիւնն է այժմ որ իւր անողք վճռով կը դատապարտէ կրօնի այդ բրօքականները :

Տօքթ . Պոնֆոյ , չափազանց մասկերութեան միասնները իւր անձնական փորձերով հաստատած է . կ'ըսէ թէ մորթային հիւանդութեան մը ենթակայ ըլլալով 15 տարի շարունակ ազգեցիկ դեղեր առած եմ , սակայն անոնցմէ օգուտ մը չեմ տեսած . քանի որ միս ուտելը շարունակած եմ . « Երբ մասկերութիւնը շարունակեմ կ'ըսէ , հիւանդութիւնս կը ստատկանայ : Ընդհակառակը երբ միս ուտելը գաղբեցնեմ և միայն բու-

(1) Մսային չարաչար աշխատութիւնն այ միւսնոյն ներգործութիւնը ունի :

սեղաններով բաւականամբ, հիւանդութիւնս տակաւ կ'անհետանայ» . նոյն բանը փորձած է շատ մը իրեն յաճախող հիւանդներուն վրայ եւ 1890 ին թիւթերու միջոցաւ եղելու թիւնը պ'արգած է :

Սերպիոյ պիտական հանդէսները պարբերաբար հրատարակած են բուսակերութեան բարեբար արդիւնքը՝ իրողութիւններու վրայ յենլով : 1898 յունիս . Պէրլինի մէջ պատերազմական նախարարին հովանաւորութեանը տակ մրցում մը տեղի ունեցած է բուսակերութեան եւ մտակերութեան կուսակիցներուն միջեւ . Այդ մրցման նպատակն էր 112 քիլոմէթր հեռաւորութեամբ տեղ մը վազելով 18 ժամուան մէջ հասնիլ :

Ուտի 6 բուսակեր եւ 12 մսակեր երիտասարդներ մի քանի ամիս անուցին . առաջինները բուսակերներով եւ պտուղներով , իսկ երկրորդները միայն մսով , Արդիւնքը ապշեցուցիչ եւ զաւ . բուսակերք փոխանակ 18 ժամուան՝ 14 ժամ եւ 15 վայրկեանէն որոշեալ տեղը հասան իսկ մսակերներէն ո՛չ մին կրցաւ նպատակակէտին հասնիլ . սոյն հանդիսին նոյն ինքն նախարարը ներկայ էր :

Երկրի մէջ (Հար . ամերիկա) աշխատող գործաւորաց վրայ եւս նոյնպիսի արդիւնք տեսնուած է փորձով : Միտսով , լուրիսով եւ այլ բանջարեղէններով ապրող գործաւորք աւելի լաւ եւ շատ գործ կը հանէին քան թէ յօգապիֆով սնանող երիտասարդ անգղիացիները անգամ մը ամերիկայի մէջ Գէնթըի համալսարան գործատան մէջ աշխատող գործաւորները փորձի համար երեք կարգի բաժնեցին , եւ առաջին խումբին միայն բուսակեր տուին իբր սնունդ , երկրորդ խումբը մսով սնուցուեցաւ . իսկ երրորդին խառն ուտելիք (թէ բոյս եւ թէ միս) տուին :

Տեսնուեցաւ որ բուսակերներով սնանող գործաւորները միւսները կը գերազանցէին աշխատութեամբ , եւ արագ ու մաքուր գործ կ'արտադրէին : Հակառակ կերպով փորձը կրկնեցին , այսինքն մսակեր խումբը բուսակերներով սնուցին . աւելորդ է ըսել թէ արդիւնքն ալ արբեր կողմ :

Թէպէտեւ Բարիզի բժշկական Ակադեմիան չորս տարի շարունակ թոքախտի մասին փորձեր կատարելով շուներու եւ ուրիշ կենդանեաց վըրայ 1899 ին բացարձակապէս յայտարարեց թէ՛ մսին մէջ գտնուած քրօնային , ալպիւնօզ եւ ուրիշ . . . նիւթերը մարմնոյն գործարանաց մէջ տարածուելով՝ թոքախտի միքրօպներուն գործածած աւերումը կը դարձանին եւ անոնց թոյնին կը հակադրեն , հետեւաբար թոքախտաւորներու հում միս եւ անարիւնութիւն (Anémie) ունեցողներուն կէս երկ արիւնն ալ պիտի ֆթէք ուտել կը յանձնարարէր . սակայն Ակադեմիոյ սոյն առաջարկը Գերմանիոյ , Չեքոսլովակիոյ եւ ուրիշ տեղի շատ մը բժիշկներու կողմանէ չ'ընդունուեցաւ :

Այս վերջինները կը պնդեն թէ շուներու վրայ եղած փորձը , ձիու , ճագարի եւ ուրիշ կենդանեաց վրայ միեւնոյն արդիւնքը չ'պիտի տար , եւ կը յաւելուն թէ թոքախտաւորները բարեխառն կլիմայի տակ մաքուր , օդաւէտ եւ լուսաւոր տեղեր ապրիլու են : Անոնք սննդաբար եւ դիւրամարս կերակուրներու պէտք ունին . ինչպէս կաթ , հաւկիթ , պտուղ , բանջարեղէններ եւն . եւ կ'առաջարկեն որ միսը ո՛չ թէ միայն թոքախտէ սկիւրացած մարմնոյն տաքութիւնը կը կրկնապատկէ , այլ նաեւ մարսողական գործարանաց չարաչար մեծ տալով ջրային գրութիւնը բոլորովին կը խանգարուի :

(Եարուեակեղի) 2084

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիզ 20 ապրիլ . — Պ . Տէլքասէ Ս . Բէթէրպուրկ մեկնեցաւ :

Լոնտոն 20 ապրիլ . — Պօէրները Մօլթէնօի մօտ անասուն եւ չոր խոտ բեռցած կառախուժը մը գրաւած են :

Լոնտոն 20 ապրիլ . — Ակինալուս թուղթ մը կը չ'առարակէ սրով աւեն Ֆիլիպեան ապստամբաց անձնատուր ըլլալ կը յանձնարարէ :

Մատրիտ 21 ապրիլ . — Սպանիոյ մէջ հակակղերական ցոյցերը կ'աւելնան :

Սէլանիկ 22 ապրիլ . — Պուլկար աւազակները Մանասթըրի եպիսկոպոս Բարթէնիուսը սպաննած են . ոճրին լուրը մեծ յուզում կ'ը պատճառէ :

Լոնտոն 22 ապրիլ . — Պօքսպուրկի գօմանտօն , որ 166 հոգիէ կը բաղկանար՝ զէնքով ու մթերքով անձնատուր եղած է Միտալպուրկի մէջ :

Ս . Բէթէրպուրկ 22 ապրիլ . — Պ . Տէլքասէ հոս հասաւ , ժողովրդին « կեցցէ Քրանսա » ազազակներուն միջև :

Սէլանիկ 22 ապրիլ . — Սէյֆուլլահ Վաշա հրաման ստացած է Պուլկար սահմանազուլը երթալ , քննելու համար թէ՛ Պուլկարիոյ գաղանի սպառազինումը իրաւէ : Սէյֆուլլահ վաշա վաղը պիտի մեկնի :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՉԻՆԱՍՏԱՆ

Անցեալները Բէքինի մեծ դրան առջեւը Գերմանացի Պարլ հարիւրապետը սպաննուած գտնուած էր եւ վաւերացէ Մարաշխատը խիստ քննութիւն մը բացած էր , յանցաւորները պատժելու համար :

Մարաշխատը այժմ կը հեռագրէ թէ Նօհուան անուն Չինացի մը ձերբակալուած է , որը կը խօստովանի իր գործած ոճիրը եւ իբր արդարացում կը պատասխանէ թէ՛ այդ ոճիրը գործած է Գերման հարիւրապետին իրեն հանդէպ ունեցած ամենագէշ վարմունքներուն պատճառաւ :

Ուրիշ Չինացի մ'ալ ձերբակալուած է որուն քով գտնուած է սպաննուած հարիւրապետին ձին :

Նմանապէս երկու կասկածելի Չինացիներ ալ ձերբակալուած են :

ԹՐԱՆՍՎԱԼ

Թրանսվալի Փոխ - Նախագահը Չորավար Շալք Պուրկըր կառավարութեան մայրաքաղաքը թօթէսպուրկ փոխադրած է որ Միտտէլպուրկի Արեւմուտքն է :

Պայերի գօմանտօն Պօէր պաշտօնակալներով ընկերացած Համեւսպուրկ գացած է :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆԳԱՏՆԻՍ . — Դժգոհութեանց ձայներ կը հասնին մեզ թէ՛ Ս . Չառիկի կերակի օրը 100 է աւելի իգական սեռէ ապաշխարողներ՝ զրկուած են հաղորդուելէ , Սրբութեան սպառած լինելուն պատճառաւ :

Ճիշտ ժամանակն է եղեր ոչ Գրիտոս հաղարաւորներ կերակրող երկու նկանակներովը այդ պահուն օգնութեան հասնէր եւ ցոյց տար թէ՛ երկրի վրայ իր փոխանորդները շատ ողորմելի բաներ են . . . :

ԽՏԻԻԸ . — Նորին Բարձրութիւն Խըտիւր՝ երէկ բոլոր օրը Գուպէի Պալատը մնաց :

ՄՈՒԽԻՍԱՐ ՓԱՇԱ . — Օսմանեան Գօմիսեր Ղալի Մուխիտար փաշա անցեալ առաւօտ ժամը 11ը 20 անցած , մանաւոր

կառախուժքով Աղէքսանդրիա մեկնեցաւ , ուր ամառուան եղանակը պիտի անցնէ :

Խոփախան ընտանիքն , բաղնիթիւ իշխաններ , նախապետներ , կառավարիչը եւ շատ մը պաշտօնական անձնաւորութիւններ կայարան գացած էին հրաժեշտ առնելու համար . Բ . Խոփիլը իր արարողակարգը դրկած էր :

Կառախուժքը ժամը 3ը 20 անցած Հատրայի կայարանը հասած է , ուրկէ Մուխիտար փաշա իր ընտանիքով եւ հետեւորդներով թիւ 3 ապարանքը գնացած է :

ՄԵԿԻՍԻՄ . — Պ . Քօկօրտան , Քրանսայի ներկայացուցիչը , առաջիկայ ամսոյ ըսկիզբէն արձակուրդով եւրոպայ պիտի մեկնի :

ՋՐՇԵՂՋՆԻՐԸ . — Լորա Քրօմէր անցեալ առաւօտ Աստանէն դարձաւ . ուր գացած էր շրջեղջները այցելելու . ելլաւտական խորհրդականը իրեն կ'ընկերանար :

ԱՆՁՆԱՊԱՆՈՒԹԻՒՆ . — Աթթարին բընակող Անթուան Շօվէ , 76 տարեկան , անցեալ օր իր սենեակին մէջ անձնապաշտ եղած է հետեւեալ եղանակաւ :

Կրակարանի մը մէջ ածուխ վառելով դրած է սենեկին մէջ եւ դռները ու պատահանները լաւ մը դոցելէ վերջ , իր անկողնոյն մէջ պառկելով մահուան սպասած է , որ բարեբաղդաբար շուտ այցելած է իրեն :

ԿՐՕՆԱՓՈՒԹԻՒՆ . — Էյ-Մօքրաս կը ծանուցանէ իր վերջին թուովը թէ՛ Ապու Մուսա անուն Հրէայ ընտանիք մը որ 25 հոգիէ կը բաղկանայ Մահմետականութիւնը ընդունած է Մահքէմէի նէրի առջև :

ՆԱՄԱԿ ՓԱՐԻՉԷՆ

Փարիզ 8 Ապրիլ 1901

Պ . A . SAISSY Ի ՄԱՀԸ

Գործակալութեանս ընդհանուր Տնօրէն եւ հիմնադիրն Պր . Սէսի , որ տասնևհինգ օրերէ ի վեր թոքերու բորբոքումէն կը տառապէր , իր մահկանացուն կնքեց ներկայ ամսոյ 2 ին՝ 57 տարեկան հասակին մէջ :

Պր . Ա.Սեոէ Սէսի ծնած էր ծովային Ալբեանց Գան քաղաքին մէջ եւ իր երկրորդական կրթութիւնն ստանալով Լէոնի Լիսէին մէջ , յետոյ ինքզինքը նուիրած էր գրականութեան եւ պատմութեան :

Փրանս-Գերմանական պատերազմին ժամանակ (1870-71) Գանի մէջ կամուարներու գունդեր կազմակերպելով , անոնց հետ մեկնած , եւ Լուառի բանակին բոլոր պատերազմներուն մասնակցած էր :

Մի քանի տարի յետոյ Պր . Ա.Սեոէ Սէսի Հունգարիա գայած եւ հին գրական եւրեկայիներ եւ բանաստեղծութիւններ հաստատած էր , որոնք մեծ յաջողութիւններ ունեցած եւ համալսարանում էին Պուտաբէսթի մէջ :

Այս մայրաքաղաքին մէջ մնաց 1874 էն մինչև 1882 . հետինթացութեան մէջ համալսարանի ուսուցչակետութեան տիտղոսըն ստանալով , գառախօսեց Ֆրանսայի գրականութիւնը եւ պատմութիւնը :

Այդ միջոցին հիմնեց « Gazette d' Hongrie » անուն թերթը , որը քիչ ատենէն ամենէն շատ կարգացուած թերթն եղաւ Հունգարիոյ մէջ :

Յրանա վերադառնալով 1882 ին Պր. Սէսի աշխատակցած է փարիզեան Մամուրի շատերուն, ինչպէս նաև զանազան Հանդէսներու:

Վերջապէս 1892 ին Պր. Ամատէ Սէսի կը մտնէր «Le Journal» թերթին խմբագրութեան մէջ իբր պիտ, և կառավարիչ նոյն թերթի արտաքին քաղաքականութեան խմբագրութեանը:

1899 Մարտ ամսուն մէջ Պր. Սէսի հիմնեց Paris Nouvelles ի գործակալութիւնը, իրեն օգնական անելով Պ. Պ. Ֆրէտէրիք Ամուրէթի, Արթիւր Լինչ, և այս տողերու գրողն. մէկ երկու ամիս վերջին ալ կ'սկսէր Հայկական ճիւղը, որ քիչ ժամանակէն բոլոր Եւրոպայի մէջ տարածութեամբ և առաջնակարգ գործակալութեանց կարգն անցաւ: Ինքզինքը բուլղարիին այս գործակալութեան նախընտրէր համար Պր. Ամատէ Սէսի 1900 զեկտեմբերի վերջերն իւր հրատարականը կուտար, «Le Journal» թերթէն:

Պր. Սէսի կարեւոր հրատարակութիւնները բաժն է Հունգարիոյ, Պալքանի և Աւստրիոյ ազգաբնակչութեանց վրայ:

Պր. Սէսի Պատուոյ Լէգէոնի Ասպետ էր, կաթոլիկ Իզուպէլլայի կարգին (Սպանական) հրամանատար և ունէր նաև ուրիշ բազմաթիւ շքանշաններ:

Հազիւ թէ անոր մահուան լուրը տարածուեցաւ, և ահա Փարիզի ամեն կարմիրէն խումբ խումբ անձինք եկան իրենց ցաւակցութիւնն յայտնելու հանգուցելովն Այլրի կնոյր: Առաջին եկողները եղան Պ. Պ. Բօլ Տիչանէլ՝ Նախագահ ֆրանսական Աւստրիայի. Տէլքասէ՝ Նախարար արտաքին գործոց, Հասարակաց կրթութեան, Արգարութեան և ներքին գործոց նախարարք Հասարակապետութեան Նախագահի ներկայացուցիչը: Սենտի Նախագահը. բալթիկ երեսփոխաններ և Մերակուտականներ, Ակադեմիականներ, խմբագրապետներ և խմբագիրներ: հրատարակարաններ և վիճակական բարձր աստիճանի պաշտօնեայիներ, արդիտներ ևն. ևն:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

(Շարունակելի)

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՄԻՄՈՆ ՖԵԼԷԿԵԱՆԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ


Բաւական ժամանակէ ի վեր տպագրութիւնը թէև աւարտած էր, սակայն ինչ ինչ պատճառներով հեղինակին կողմանէ վաճառման տեղը որոշուած չ'ըլլալով՝ ծանուցումը յապաղեցինք. ուստի տպագրական պարտաւորութիւն կը համարինք այժմ ծանուցանել անոր աւարտումը այն ընթացաւոր ազգայնոց, որոնք կը սիրեն ազգու հայրենիք, և անոնց վերաբերեալ որոշաւորաւ ողբերգութիւն մը:

Սոյն երկապիութեանէն գնել փափաքողը կրնան դիմել Հեղինակին, որ ամեն օր կէս օրէ վերջ ժամը 3 — 5 «Արշալոյս» ի խմբագրատունը կը գտնուի:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱԳՐԱՆԻ

ՏՆԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՈՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՈՒՄԱԿ ԳՐԱՍԱԳՐՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ Ապահովագրութեանը կը բաժնէ նէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրութեանը արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ քրի է ընկերութեանէ մէկ միլիար աւելի է: Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկա. յայտնել է Գահիրէ ԳՐՈՒՄԱԿԱԼ Ի ՄՈՒՍԿԻ ԳԷՈՐԳ ԵԿԱՌՅԹ

Ս Ի Ն Կ Է Ր ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԱՆԿԵՐ Պալաքի փողոց. Խաչնետարի սեփականութիւն, Պրիսթլ Օրիէլի ճիւղ գիմաց, Գաթէ Տը Լա Պուրսի կից: ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն բաւազոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են և ասոնցմէ մինչև ցար. 17,000,000 ծախուած է: 400 Կ աւելի վկայականներով եւ մեքայններով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ: ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արձուսանաւթիսին մէջ ստացած է: ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻԹԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅՆԿԱՅՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԱՏԷՎԱԿԱՆ ՏԱՆ Զրի գլխաւոր և նորոգութիւններ, Արիսթի մեքենայից համար, յաճախորդաց ստաներուն մէջ: Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն կրնան օգտուելու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՐԻԱԿԻ 21 ԱՊՐԻԼ 1901

8633	347	6088	3722	132	664
1529	1573	1583	1654	1865	2074
2443	2977	3206	3348	3423	3637
3861	4055	4584	4653	4859	5384
5691	5904	6442	6467	7202	8968

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՐԻԱԿԻ 21 ԱՊՐԻԼ 1901

5053	7440	2082	1206	2163	5120
558	3555	2052	5011	4282	5671
716	3867	5342	6768	2317	641
4311	3625	5742	493	3311	1868
			3493	7613	8134

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱԳՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ ԵՒ ԱՐՇԱԼՈՅՍԻ ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԿԱ ԱՊՏԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԻՋԸ Օսմանիյի դեպարտմենտի դիւանի փողոցի մէջ: Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին: Այցեխարտեր, Երաշխարհակներ, Գիւրտ, Հրաւիրագրեր, Մանուկներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ գրքերն. 1. ԲՆԱՇԻՄԱՐՀԻԿ ԲԱՌԱՍՐԱՆ Ի Ա. Ե. Բ. պրակներն: 2. ՈՐԲՈՒՆԻ որոյ թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արդիւում է: 3. ՀԱՒԱՔԱՏՈՑ Հայոց ժողովրդական երգերու: